



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

Երևան, 0025, Արովյան 52<sup>ա</sup> • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52<sup>а</sup> • 52<sup>а</sup> Abovyan,  
0025, Yerevan, Republic of Armenia(+374 10) 54-43-91/94,95,96/1 ՀՀ -37, armphilology@ysu.am, [www.ysu.am](http://www.ysu.am)

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 2**

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝**

**2022 Թ. ՄԱՐՏԻ 9 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

***Օրակարգում՝***

1. Մանկավարժական և արտադրական պրակտիկաների ընթացքը ամփոփումներում:
2. Հայ գրականության ամփոփի հաշվետվությունը:
3. Աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարումների նոր կարգին վերաբերող տեղեկատվություն:
4. Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության, հայ նորագույն գրականության և գրականության տեսության և գրաքննադատության ամփոփումները միացնելու և «Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության» ու «Հայ նորագույն գրականության և գրականության տեսության և գրաքննադատության» ամփոփումներ ստեղծելու հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 33-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

**Օրակարգի 1-ի հարցի** առթիվ մանկավարժական և արտադրական պրակտիկա ունեցող համապատասխան ամբիոնների վարիչներն նշեցին, որ ուսանողների շրջանում պրակտիկայի ընթացքից դժգոհություններ չկան, դեկավարներն էլ պարբերաբար հանդիպում են ուսանողներին: ԵՊՀ հրատարակչությունում և <<Զանգակ>> հրատարակչությունում պրակտիկաները ևս անցնում են առանց բացթողումների:

Ելույթ ունեցողները նաև հույս հայտնեցին, որ արդյունավետ պրակտիկան էապես կնպաստի ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը:

**Օրակարգի 2 - րդ հարցի** առթիվ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ պրոֆ. Ալ. Մակարյանը իր խոսքում մասնավորապես նշեց.

**2021-2022** հաշվետու տարում ամբիոնի անդամները գիտական զեկուցումներով մասնակցել են միջազգային, հանրապետական ու համահամալսարանական գիտաժողովների, հրատարակել են գրքեր, հոդվածներ՝ հեղինակավոր պարբերականներում, և ուսումնասիրությունների ժողովածուներ: Ամբիոնն ունի 5 հաստիք. աշխատում է 9 դասախոս՝ 3 պրոֆեսոր, 6 դոցենտ՝ 0.5 դրույքով: Նշելի է, որ բոլորն էլ աշխատում են բարեխղճորեն, պատշաճ մակարդակի են կարգապահությունն ու բարոյահոգեբանական մթնոլորտը: Նրանց մի մասը հաճախ է լինում հանրապետության դպրոցներում, հանդես գալիս դասախոսություններով և փորձում սեր արթնացնել հայ բանասիրության նկատմամբ:

Ամբիոնը վերջերս լույս ընծայեց «Պետրոս Դուրյանը վավերագրերում և ժամանակակիցների հիշողություններում» գիրքը՝ աշխատասիրությամբ պրոֆեսոր Ալ. Շարուրյանի. այն նվիրված է Պետրոս Դուրյանի ծննդյան 170 և գրականագետ Ալբերտ Շարուրյանի ծննդյան 90-ամյակներին:

Պրոֆ. Ալ. Մակարյան – տպագրել է 1 գիրք, 1 մենագրություն՝ համահեղինակությամբ, 10 հոդված և միջազգային 2 գիտաժողովներում (ԵՊՄՀ և ՀՀ ԳԱԱ) կարդացել ցեկուցումներ:

Պրոֆ. Ս. Մուրադյան – տպագրել է 3 գրքեր: Հրատարակել է նաև Հովհաննես Շիրազի՝ հայոց ցեղասպանությանը նվիրված «Հայոց դանթեականը» դատաստանամատյան–պոեմը՝ ընդարձակ առաջաբանով և հավելումներով, որոնք կատարվել են վեց ձեռագիր-մեքենագիր տարբերակների և պոեմի՝ 1990 թ. հրատարակության համեմատական քննությամբ: Ընդ որում՝ 2021 թ. դեկտեմբերին ԵՊՀ ռեկտորի նախաձեռնությամբ կայացավ գրքի շնորհանդեսը:

Պրոֆ. Վ. Սաֆարյան - վերահրատարակել է «Գրողի կերպարը և անհատականությունը» մենագրությունը և տպագրել գիտական 2 հոդված:

Դոց. Վ. Ավագյան - տպագրել է գիտական 6 հոդված, գիտական մեկական զեկուցմամբ հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

Դոց. Ն. Վարդանյան – հրատարակել է 2 գիրք (մեկը՝ հավաքական մենագրություն, մյուսը՝ պատումների ժողովածու), գիտական 4 հոդված, 2 զեկուցումներով հանդես է եկել հանրապետական գիտաժողովներում:

Դոցենտներ Ս. Սրապիոնյանը և Վ. Եղիազարյանը տպագրել են գիտական 1-ական հոդվածներ:

**Օրակարգի 3 - րդ հարցի** առթիվ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ ԵՊՀ գիտխորհուրդը հավանության է արժանացրել աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարումների նոր կարգին: Պրոֆ Ավագյանը նշեց, որ կատարված փոփոխություններով պակասել են հոդվածների համար դասախոսներին տրվելիք հավելավճարները, մինչդեռ միջազգային ամսագրերում հոդվածներ

տպագրելու համար սահմանվող լրավճարները էապես բարձրացվել են: Ելույթ ունեցողները ևս մտահոգություն հայտնեցին, որ ի տարբերություն բնագիտական մասնագիտությունների՝ հայագիտության ոլորտի գիտնականները այս դեպքում անհավասար պայամաններում են հայտնվում, քանի որ իրենց հոդվածները միջազգային վարկանիշային ամսագրերում տպագրելու լուրջ խնդիրներ ունեն:

**Օրակարգի 4-րդ՝** Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության, հայ նորագույն գրականության և գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնները միացնելու և «Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության» ու «Հայ նորագույն գրականության և գրականության տեսության և գրաքննադատության» ամբիոններ ստեղծելու հարցի կապակցությամբ՝

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** – Բ.գ.դ., պրոֆ. պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ալ. Մակարյանը, Բ.գ.թ., դոց. դոց. Վ. Պետրոսյանը, Թ. Տոնոյանը, Ն. Դիլբարյանը, Ս. Գրիգորյանը, Ա. Ջրբաշյանը և ուրիշներ: Պրոֆ. Ա. Ավագյանը նախ նշեց, որ Երևանի պետական համալսարանում սկսվել է մի գործընթաց, որը, ելնելով տնտեսական նպատակահարմարությունից, ներկայումս գործող փոքրաթիվ հաստիքներ ունեցող ամբիոնները պետք է միավորվեն: Ելնելով այդ պահանջից՝ դեկանատը առաջարկում է ընդհանուր լեզվաբանության, հայոց լեզվի պատմության, գրականության տեսության և գրաքննադատության, նորագույն գրականության ամբիոնները միացնել և ստեղծել երկու նոր ամբիոններ, որոնցից մեկը /հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության/ կունենա 8,5, մյուսը /հայ նորագույն գրականության և գրականության տեսության և գրաքննադատության/՝ 7 հաստիք: Այնուհետև ելույթ ունեցողների մի մասը այն կարծիքն հայտնեց, որ ամբիոնների միավորման հարցը պաշտոնապես չի քննարկվել ամբիոնների անդամների և վարիչների հետ, գիտխորհուրդ են բերվել միավորման այնպիսի տարբերակներ, որոնք քիչ են համապատասխանում ամբիոնների մասնագիտական ուղղվածությանը և չեն արտահայտում դասախոսական կազմի պատկերացումները ամբիոնների հետագա ճակատագրի վերաբերյալ: Նման կարծիքն իր երկրորդ մասով որոշ քննություն բռնելով

հանդերձ՝ ճիշտ չէ իր առաջին մասով՝ թե ամբիոնների հետ չեն քննարկվել տարբերակները:

Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ Վ. Պետրոսյանը ներկայացրեց իրենց ամբիոնի նիստի եզրակացությունն *ընդհանուր լեզվաբանության* և *հայոց լեզվի պատմության* ամբիոնների միավորման վերաբերյալ: Նա մասնավորապես կարևորեց երկու հանգամանք. «1) *Ընդհանուր լեզվաբանության* ամբիոնը թեպետև բովանդակային ընդհանրություն չունի հայերենագիտական ուղղվածության ամբիոնների հետ, սակայն կոչված է առաջին հերթին ծառայելու հայերենագիտության զարգացմանը, որն էլ արել է իր հիմնադրումից (1925 թ.) ի վեր՝ շուրջ մեկ հարյուրամյակ: Ի դեմս *ընդհանուր լեզվաբանության* ամբիոնի՝ բանասիրության բնագավառում ներկայացված են լեզվաբանական գիտաճյուղեր (լեզվի տեսություն, պատմահամեմատական լեզվաբանություն) և միջգիտաճյուղեր (լեզվանշանագիտություն, լեզվափիլսոփայություն, համակարգչային լեզվաբանություն), ինչպես նաև ուսուցանվել են դասական լեզուներ (լատիներեն, հին հունարեն): Համոզված ենք, որ *ընդհանուր լեզվաբանության* ամբիոնի՝ որպես ինքնուրույն միավորի կորուստը կհանգեցնի նշված գիտաճյուղերի կորստի, նվազագույնը՝ որակական էական անկման, որովհետև հարցականի տակ կդրվի առաջին հերթին նոր գիտական կադրերի պատրաստումը: 2) *Ընդհանուր լեզվաբանության* ամբիոնի միջոցով է իրականացվում կապը ազգային լեզվաբանության և ընդհանուրլեզվաբանական մտքի նվաճումների միջև, հետևաբար այդ գիտաճյուղից հրաժարումը չի կարող իր բացասական հետևանքները չունենալ նաև հայերենագիտության զարգացման վրա»:

*Գրականության տեսության և քննադատության* ամբիոնի վարիչ Ա. Ջրբաշյանը նշեց, որ գրականության ամբիոնների վերակազմավորման հարցը կարելի է քննարկել արդյունավետ տարբերակով, և առաջարկեց անցկացնել գրականության երեք ամբիոնների համատեղ քննարկում, որտեղ հնարավոր կլինի գտնել առավել արդյունավետ լուծումներ, քան այն, ինչն առաջարկվում է ամբիոնների միավորման՝ ֆակուլտետի գիտխորհրդին ներկայացված նախագծով:

Բ.գ.թ., դոց. Ն. Դիլբարյանն իր խոսքում ասաց, որ ՀՀ կառավարության, ըստ այդմ՝ ԿԳՄՍ նախարարության քաղաքականության հիմքում փաստաթղթային հիմնավորումներով կրթության և գիտության, հատկապես հայագիտության զարգացումը առաջիկա 8 տարիներին՝ մինչև 2030 թվականը, հրապարակված ծրագրով հայտարարված է գերակա ուղղություն, որտեղ բարձրագույն ուսումնական հաստատությունները մեծ ու հավակնոտ նպատակներ ունեն՝ մուտք գործելու բուհերի միջազգային վարկանշային ճանաչված ցուցակներ և այնտեղ պատշաճ տեղ գրավելու: Պետական այս կարևորագույն ծրագրերում առաջատար և պատշաճ դերակատարություն ստանձնելու նպատակով ԵՊՀ-ն իր պրոֆեսորադասախոսական կազմով, ֆակուլտետների կառուցվածքային համակարգով մեծ առաքելություն և աշխատանք պետք է ունենա: ԵՊՀ պետք է լինի այն 5 առաջամարտիկ բուհերից մեկը, որն առաջինը կփորձի մինչև հայտարարված 2030 թվականը զբաղեցնել բուհերի միջազգային վարկանշային ցանկերի պատվավոր տեղերը՝ ներգրավելով օտարերկրյա ուսանողների և մասնագետների, վստահություն վայելելով: Այս նպատակին հասնելու համար ԵՊՀ ֆակուլտետների ամբիոնների վերակազմավորման կամ վերամեկնարկի ծրագրերի քննությունը համարում ենք պատեհ և տեղին, սակայն վերակազմավորման յուրաքանչյուր քայլ պետք է ունենա հստակ մշակված հիմնավորումներ. ա) ինչ ենք շահում կրթական, գիտական և ֆինանսական բաղադրիչներից յուրաքանչյուրի համար կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով և բ) ինչ ենք կորցնում:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ելնելով վերոնշյալից և գիտխորհրդում կատարված բաց քվեարկության արդյունքներից /գիտխորհրդի 36 անդամներից քվեարկությանը մասնակցել է 33 – ը /28 կողմ, 5 ձեռնպահ/՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում *հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության, նորագույն գրականության և գրականության տեսության և գրաքննադատության* ամբիոնների միավորումը համարել ոչ նպատակահարմար և հետագա կրթական, ֆինանսական և վարկանշային զբաղյուրյան լուրջ կորուստերի հանգեցնող քայլ:

2. Գիտխորհրդի կազմից ստեղծել հանձնաժողով /բ.գ.թ., դոց. դոց. Վ. Պետրոսյան, Ն. Դիլբարյան, Ա. Ջրբաշյան/, որը կկազմի և ռեկտորատ կներկայացնի իրենց առաջարկները /հանձնաժողովի նիստի արձանագրությունը կցվում է/:

**Ընթացիկ հարցերում քննարկվեցին.**

ա/ **Լ Ս Ե Ց Ի Ն** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի պրոֆեսոր, բ. գ. դ., **Վազգեն Հմայակի Սաֆարյանի** «19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականություն (դասախոսություններ – 1)» գիրքը տպագրության երաշխավորելու հարցը:

**Ա Ր Տ Ա Շ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** – բ. գ. դ., պրոֆեսորներ Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, Վ. Սաֆարյանը, Վ. Գաբրիելյանը, բ. գ. թ., դոցենտ Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ տասնամյակների դասատվության ընթացքում ամբողջացած այս աշխատանքում մատչելիության պահանջները բավարարում են գիտավերլուծական և մեթոդական համադրումներով: Շրջանառվող գեղարվեստական նյութը ներկայացվում է նկարագրական, պատմահամեմատական, նաև կառուցվածքային և հոգեվերլուծական մեթոդներով: Հստակ պատկերացում է տրվում ոչ միայն հեղինակի այս կամ այն ստեղծագործության և տվյալ ժամանակշրջանի քաղաքական ու սոցիալական իրավիճակների հարաբերության, այլև կերպարակերտման, պատկերավորման սկզբունքների և գեղարվեստական այլ առանձնահատկությունների մասին: Դասընթացում ներառված գրողների մասին հեղինակը տպագրել է հոդվածներ (Ընթացիկ, Շիրվան-զադե), մենագրություն (Մուրացան, Նար-Դոս): Դասախոսությունների գիտամանկավարժական արդյունավետությունը հաստատվել է աշխատանքային գործընթացում, ինչը և առաջադրում է տպագրելու անհրաժեշտություն:

Գիրքն ունի խմբագիր՝ բ.գ.դ., պրոֆ. Ալ. Մակարյան, և երկու գրախոսներ՝ բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան, բ.գ.թ., դոց. Ռ. Էլոյան:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - Նկատի ունենալով, որ դասախոսությունների հրատարակությունը կարևոր նշանակություն ունի ուսանողների համար, այն երաշխավորել տպագրության:

Բ/Լ Ս Ե Ց Ի Ն - <<Հայ գրականության պատմություն>> մագիստրոսական ծրագրի 2021-2024 թթ. ուսումնական պլանում փոփոխություն կատարելու մասին հայ գրականության ամբիոնի առաջարկությունը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Բ. Գ. Ռ., պրոֆեսորներ Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, Վ. Սաֆարյանը, Վ. Գաբրիելյանը, Բ. Գ. Թ., դոցենտ Ռ. Էլոյանը:

Ելույթ ունեցողները նկատեցին, որ ամբիոնի առաջարկը մագիստրատուրայի 3-րդ կիսամյակում <<Հայ պոեմի արվեստը>> առարկան <<Գրականություն և հոգեբանություն>> առարկայով փոխարինելու մասին հիմնավոր է և ունի արդիական հնչեղություն:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – 1. Հաստատել <<Հայ գրականության պատմություն>> մագիստրոսական ծրագրում <<Հայ պոեմի արվեստը>> առարկան <<Գրականություն և հոգեբանություն>> առարկայով փոխարինելու մասին հայ գրականության ամբիոնի առաջարկությունը:

2. Դիմել ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր տիկին Է. Սարիյանին՝ <<Հայ գրականություն>> մագիստրոսական ծրագրում համապատասխան փոփոխությունը թույլատրելու համար :

Գ/Լ Ս Ե Ց Ի Ն - Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի վարիչ, Բ.Գ.Թ., դոցենտ Աշխեն Զրբաշյանի «Տաղաչափության հարցեր» աշխատությունը հրատարակության երաշխավորելու հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը, դոց. դոց. Ա. Գալստյանը, Ռ. Էլոյանը, Ա. Սարգսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ այս գիրքն ընդգրկում է հեղինակի՝ շուրջ երկու տասնամյակներում կատարած ուսումնասիրությունները տաղաչափության խնդիրների վերաբերյալ: Գրքում ներառված են ինչպես հայ տաղագիտության պատմության, այնպես էլ հայ պոեզիայի ստրոֆիկական և տաղաչափական վերլուծությանը վերաբերող կարևորագույն հարցեր: Գրքի ընդգրկման շրջանակը բավական լայն է. այստեղ քննության են առնված արևելահայ ու արևմտահայ, ինչպես նաև ժամանակակից



բանաստեղծների տաղաչափական սկզբունքները: Գրքի գրախոսներն են պրոֆ. պրոֆ. Ժ. Քալանթարյանը և Ալ. Մակարյանը, խմբագիրն է դոց. Վ. Նավասարդյանը: **ՈՐՈՇԵՑԻՆ** – Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի վարիչ, դոց. Ա. Ջրբաշյանի «Տաղաչափության հարցեր» գիրքը երաշխավորել տպագրության: **Դ/ Լ Ս Ե Ց Ի Ն** - «Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն» մագիստրոսական ծրագրում <<լեզվափիլիսոփայություն>> դասընթացը <<սանսկրիտ>> դասընթացով փոխարինելու մասին ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առաջարկությունը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**– Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու.Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Ա. Ջրբաշյանը, Վ. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առաջարկությունը հիմնավորված է, նկատի է առնում ոչ միայն ստեղծված իրավիճակը, այլև մագիստրոսների՝ նոր դասական լեզու սովորելու ցանկությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Հաստատել «Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն» մագիստրոսական ծրագրում կամընտրական <<լեզվափիլիսոփայություն>> դասընթացը <<սանսկրիտ>> դասընթացով փոխարինելու մասին ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առաջարկությունը:

2. Դիմել ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր տիկին Է. Ասրիյանին՝ «Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն» մագիստրոսական ծրագրում համապատասխան փոփոխությունը թույլատրելու համար :

**Ե/ Լ Ս Ե Ց Ի Ն** - Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Աննա Սողոմոնի Սողոմոնյանին թեկնածուական ատենախոսության թեմա հաստատելու և գիտական ղեկավար նշանակելու հարցերը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**– Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու.Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Վ. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ նպատակահարմար է Աննա Սողոմոնյանին ատենախոսության թեմա առաջարկել <<ԹՎի կարգը գրական արևելահայերենում, գերմաներենում և ռուսերենում (գուգադրական քննություն)>>:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Աննա Սողոմոնյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել <<Թվի կարգը գրական արևելահայերենում, գերմաներենում և ռուսերենում (զուգադրական քննություն)>>՝ Ժ 02. 02 մասնագիտությամբ:

2. Ատենախոսության գիտական ղեկավար հաստատել բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Վարդան Պետրոսյանին:

**զ/ Լ Ս Ե Ց Ի Ն** - Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Արաքսյա Գառնիկի Բաղդասարյանին թեկնածուական ատենախոսության թեմա հաստատելու և գիտական ղեկավար նշանակելու հարցերը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Վ. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ նպատակահարմար է Արաքսյա Բաղդասարյանին ատենախոսության թեմա առաջարկել <<Հին հայերենի և արդի ռուսերենի հոլովական համակարգերը>>:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Արաքսյա Գառնիկի Բաղդասարյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել <<Հին հայերենի և արդի ռուսերենի հոլովական համակարգերը>>՝ Ժ 02. 02 մասնագիտությամբ:

2. Ատենախոսության գիտական ղեկավար հաստատել բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Վարդան Պետրոսյանին:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ**